նոյն Պատրիարքութեան թեկնածուներին մին է, և այն ալ Քէնթերբրիի Արքեպիսկոպոսն իւր կողմն ունի:

Ես այս մանրամասնութեանց տեղեակ լինելով, Ձեր պատուարժան բարեկամին կողմնէ Հայոց դրուած և Ձեր այսօրուան կարևոր յօդուածին մէջ յիշուած տեղեկութիւնները բոլորովին հաւանական կը գտնեմ: Պ. Թոմաս Պէյամեան պարզ փառասէր մ'է և առաջին կարգի Հայասեաց. իւր թշնամութիւնն ու ատելութիւնը մեր ազգին համար մասնաւորապես ծանր են, զի նա Հայ մ'է, և Հայոց ազգին մէկ բաժանեալ մասին գլուխը գտնելու գժբաղդութիւնն ունի: Դուք «Գլասպա» անուանած եղէք զայն, բայց որովհետև Պ. Թոմաս Պէյամեան Ազգային պատմութիւն չը կարդար, ոչ ալ կը կարդացնէ, և որովհետև իբրև բողոքական, Աւետարանը շատ կարդալու մեծամտութիւնն ունի, ուստի լաւ կը լինէր եթէ «Ցուցա» անուանէիք զայն, վասնզի լինելով որ ձշմարտութենէ բնաւ չէ շեղիր:

Առ այժմ Պ. Թոմաս Պէյամեան, որ մեծ ազդեցութեան և բարեկամական հարաբերութեան տէր անձ մ'է, Տիարպէքիրի քաղաքին մէջ և շրջակայքերը քանի մը հազար Հայ և Ասորի բողոքականաց գլուխը կը գտնուի:

«Մեծ են Հայաստանի վերքերդ» կրսէիք Ձեր անցեալ շաբթուան թիւերէն միոյն մէջ. թերևս, Տէր-Խմբագիր, այդ տողը գրելով Ձեր մտքէն չէր անցներ թէ Հայաստանի և Հայ ազգութեան ամենամեծ թշնամիներն, ինչպէս յանգելումն, նոյնպէս և ներկային մէջ, իւր մէջէն ելած են միշտ:

Մեզ հետ այնքան պատուասիրութեամբ վարուող Ամերիկացի Միսիոնարքը, ինչպէս քանիցս Մասիսի էջերուն մէջ յերևան հանուեցաւ, Հայաստանի և Հայ ազգութեան ամենակեղծաւոր և ամենածածուկ, բայց և այնպէս յոյժ ազդեցիկ թշնամիներն են: Գրաւ կը դնեմ թէ Ցիսուս Քրիստոս 1800 տարի ետքն աշխարհ գալիք այս Միսիոնարներն իւր մտաց առջև ունեցած էր, երբ «ոչխարի կերպարանաք գայլերուս առակը կը պատմէր: Միսիոնարք փառասէս թշնամի են Հայոց եկեղեցւոյն, Հայոց ազգային զգայմանց և Հայոց լեզուին: Վատապէս կրսեմ, զի իրենց այս թշնամութիւնը վատ միջոցներով միայն ի գործ կը դնեն: Վերջին երկու բառերս, այն է «Հայ լեզուին» թշնամի խօսքը թերևս զարմանք պատճառեն Ձեզ.*) բայց պէտք է իմացնեմ թէ ժամանակէ մ'ի վեր Միսիոնարք սկսած են կարելի եղածին չափ Թուրքերէն լեզուին դէմ տալ մի մեծ Հայերէնի, զի այդպիսեաւ կը յուսան մէկ կողմէ Հայերն օտարացնել ազգային փառաբանէն և միւս կողմէն Հայ-Բողոքական հասարակութեան մէջ Թրքաց ալ ներմուծումը դիւրացնել: Ամերիկայի Միսիոնարաց գաղտնիքներուն քիչ շատ տեղեակ եղող անձինք գիտեն թէ Պորտ ընկերութեան այս նուիրակներն յոյժ գոհ կը լինին եթէ զուտ Բողոքական հասարակութիւն մը կազմեն, որ Հայեր, Թուրքեր, Յոյներ և այլն պատունակէ, բայց որոյ պաշտօնական լեզուն Թուրքերէն լինի, և այսպէս հետզհետէ աշխարհաքաղաքացի անհատներէ առանձին ազգութիւն մը կազմուի (Թերևս, ինչպէս արդէն ձիզուիթքը յաջողած են ընել՝ շատ մ'արևելցիներ՝ մանաւանդ Հայեր՝ Լատինացնելով, որոց Հայրենիքն այժմ Հռոմ է միայն: Միսիոնարք նոյն բանն իրենց հաշուոյն համար կուզեն ընել: Ուստի, ուր որ Հայախօս և Թրքախօս Հայք խառն կը բնակին, միշտ Թուրքերէնն յառաջ կը տանին, և քանի մ'անգամ զուտ Հայախօս տեղեր Թուրքերէն պաշտօն կատարել փորձելով, խայտառակութեամբ անյաջող եղան: Կը ցաւիմ ըսել սահման թէ շատ տեղեր ալ յաջողած են: Մարաշի, Զէյթունի և ընդհանրապէս բոլոր Կիլիկիոյ մէջ այնքան այժ տուած են Թուրքերէնի, որ այդ տեղերու Հայ-Բողոքական ազգայնոյ մի օր Հայերէն ուսնի ալ անհնար ըլած են: Մասնաւորապէս Զէյթունի մէջ ամենակեղծաւոր Միսիոնարաւէր մը կարդէ դուրս ջանքեր կընէ միմիայն Թուրքերէն (Հայատառ) գիրքեր տարածելու և Թուրքերէն քարոզ տալու. իւր ինչպէս նաև իւր նմանեցաց, այս օրինակ ձեռնարկները զարմանք կը պատճառեն նոյն իսկ Միսիոնարաց Հայ-Բողոքականաց: Այս զարմանքն ու զարհուրմը վերջինս աւելի սասկացաւ, երբ տեսնուեցաւ թէ Միսիոնարքը Հայերէն լեզուաւ գիրքերու տպագրութիւնը դադարեցնելով, Նոր Կտակարանին Հայատառ և Թուրքերէնու մի նոր թարգմանութիւն հրատարակած էին, յորում, վերը բացատրուած քաղաքականութեան հետևելով, Աբրահամ անուան տեղ, ինչպէս առաջ կը դնէին, Հայերէն գրով գրած էին «Պարահիմ», Նոյի տեղ «Նուհ», Յակոբի տեղ «Եակոբ», Բահանայի տեղ «Իմամ», Եկեղեցւոյ տեղ «Ճամի», Մարգարէի տեղ «Նէպի» և այլն և այլն. բոլորովին Թրքացեալ և Իսլամացեալ բառեր ու ձևեր. բայց Մարաշու Հայք սասկապէս բողոքեցին, ցոյցեր ըրին, Աւետարաններ պատռեցին, և Միսիոնարք քիչ մ'ետ քաշուեցան. բայց իրենց ոգին միշտ նոյն է: Ցիշեալ Հայատառ և Իսլամարարար Աւետարանէն մի օրինակ իմ քով պահուած կը կենայ:

Աւելի զարմանային կայ. մօտերս Միսիոնարք Կ. Պոլսոյ մէջ խորհուրդ կազմելով, որոշեցին այսուհետև միմիայն Թուրքերէն լեզուով կատարել տալ Հայ-բողոքական եկեղեցւոյ պաշտօններն, և իրենց բոլոր պաշտօնական գործողութիւններն, և կը պատրաստուէին այս որոշումն ի գործ դնել, եթէ նոյն իսկ իրենց վարձեալ Հայ պաշտօնատարաց ոմանց կողմէ բողոքոյ ազդու ձայն մը չեղէր, որ կասեցուց զՄիսիոնարս...: Բարեբաղդաբար, Հայ-բողոքական հասարակութեան մէջ ազգասէր մասն առջի հլուքիւնը չը ցուցներ Միսիոնարաց, և արդեպէս կը պաշտպանէ ազգային իրաւունքներն և յետս կը մղէ այն յարձակումները, զորս Միսիոնարք մերթ ընդ մերթ կընեն մեր ազգութեան վիրաբերեալ առարկելոյ վրա: Այսու ամենայնիւ, Միսիոնարք, Պորտ ընկերութեան տալարներուն շնորհիւ միշտ ամենայարգ են, և Հայ-բողոքականք ո՛րչափ ալ ջանան զիրենք այս Ամերիկացւոց լուծէն ազատել, իրենց ներքին տկարութեան պատճառաւ չեն կրնար բաղձացեալ քանակութեամբ դիմադրութիւն ընել անոնց, և կամ բան բաւականին անկախ լինել անոնցմէ. ասոր մէկ նոր և նշանաւոր օրինակն ալ այս է որ Լանկայի Հայ-բողոքականք Կէսարիկ-փաշայի կողմը մի նոր ժողովարան և դպրոց կը կանգնեն, իսկ պէտք եղած գրամին (քանի մը հազար ռսկի) 100-ին 95-ը Ամերիկայի Պորտ ընկերութենէն առած են: Քանի որ այս նիւթական սորկութիւնը կայ, աւելորդ է ըսել թէ բարոյական սորկութիւնն ալ պիտի կրեն:

Արդէս արիւն կ'երթայ, Տէր-Խմբագիր, ասանք մտածելով, զի ես երբեմն Հայ-բողոքական հասարակութեան անդամ եղած լինելով և այժմ իսկ այդ հասարակութեան բոլոր ներքին գործերուն ի մօտոյ տեղեկութիւն ունենալով, թերևս ոչ ոք կրնայ ինձ չափ զգալ թէ այս Ամերիկացի Միսիոնարք և անոնց ոգւով շարժող Հայք, ընդ որս Պ. Թոմաս Պէյամեան և անոր պէս անձինք, բարոյապէս և նիւթապէս ո՛րչափ վնասներ կուտան մեզ...: Թ՛ող ազգ. ամէն կողմէ և ամէն ժամանակ կը հարուածի և օ՛չ ոք կը խորհի պաշտպանել զայն այս բազմաչարի թշնամեաց դէմ:

(Մասիս)

*) Ոչ երբէք. զի իւր պատմած իրողութիւնը մեզ ալ ծանօթ է. Դ. Խ.

ՆԱՀԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

Կ. Պոլիս, 28 յունիս 80

Մինչև հիմա կառավարութիւնը Հայաստանի մէջ Հայոց դէմ պէտք եղած միջոցներն ձեռք կառնէր, տակաւին դիւանագիտական ասպարէզին մէջ զմեզ ազատ ձգած էր, այսինքն թոյլ կուտար որ գրենք և խօսենք ինչ որ կուզենք, և այս ոչ թէ բարեփոխութիւն մը արդիւնք էր, այլ մեր գրուածոց կարեորութիւն չէր տար և չէր կարծեր որ Եւրոպոյ կարծեաց վրայ քիչ չատ ազդեցութիւն ունենան: Բայց այժմ կարծիքը փոխեր է և դիւանագիտական մէջ ալ մեզ դէմ մարտնչելու ելեր է. Պատրիարքարանը, ինչպէս գիտէք, պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակեց, յորում կըսէր թէ պատրաստ էր վաւերական գրեալով հաստատել ինչ որ կը խօսուի Հայաստանի ազատից մասին: Արտաքին գործոց Նախարարութիւնը անուղղակի կերպով իմաց կուտայ Պատրիարքին, որ այդ յայտարարութիւնը պէտք է հերքուի. Պատրիարքը կը պատասխանէ թէ ինքն իր ըրածը գիտէ, ինքը չը հերքեր. եթէ Բ. Դուռը կուզէ թող ինքն հերքէ. Ասոր վրայ քանի մը օրէն եւրոպ տեսանք որ Կ. Պոլսոյ եւրոպական թերթերու մէջ Հայաստանէն կառավարութեան եկած հեռագիրներն հրատարակուած են: Մեքստահայէն, Յիպրանտկերտէ, Կարինէն, Բաղէշէն կուսակալներու զրկած հեռագիրներն կը հաղորդին թէ կատարեալ խաղաղութիւն և բարեկարգութիւն կը տիրէ. թէ քիւրդերն ամէնին վնաս մը չեն հասուցած, թէ ամէն ինչ նախանձելի վիճակի մէջ է. Խարբերդի իմաստուն կառավարիչն ալ իւր թերդ բանի կը յայտնէ, եթէ երբեմն ամենայնին դէպքեր տեղի կունենան դիպուածով, հայերն գործը մեծցնել, ստուարացնել կը ջանան, որպէս զի իրենց քաղաքական նպատակներն յաւակ տանեն:

Կառավարութեան համար դժբաղդութիւն մ'է որ իւր հեռագիրներուն ոչ ոք պիտի ուզէ հաւատը ընծայել. չատ տարօրինակ պիտի թուէր եթէ Վանայ կուսակալը հեռագիր թէ «Մարքս դրած եմ հայերն այն վիճակի հասցնել, որ մայրը զաւակը մորթէ, և թէ այս դիւանագիտութիւնս անխոնջ մոլեռանդ յայտնած լինելով, անգղիական հիւպատոս Բէյլիին եկաւ լինէր բացատրութիւն պահանջելու. նոյնպէս եթէ միւս կուսակալներն յայտնէին թէ Դրան կողմէ ընդունած իրենց հրահանգաց համաձայն քիւրդն ու թիւրքը, դատաւորն ու հարկահանը զՀայերն տառապեցնելու կը գործածեն, երբ մեր պատրիարքարանը իր ցոյց կուտայ, Բ. Դուռը այդ իրերը չէ կարող ստուգ հաներ, և խել մը խուզարկիչներ կը ջանայ քօղարկել. Այս նորահնար հեռագրական լուրերն դեռ նոր հրատարակուած էին, որ Մեքստայի Թօռլու գիւղէն նոյն իսկ իսլամները մեր պատրիարքին կը հեռագրեն, որ իրենց օգնութեան համար, Մեհեմմէդ անուն կեղծիքը իրենց հողերն գրաւած է, այժմ տեղական իշխանութեան գլուխ անցած է և գաղթականներն իրենց հողերուն մէջ կը բնակեցնէ,—Դեռ կը կարծէ թիւրք իշխանութիւնը որ ասոնք սուտերով, կեղծիքներով երթիրը պիտի փրկէ.—Այս սուտերու և ենթադաքաղաքականութեան գլուխ գործոց մը կընայ համարուիլ Հայոց խնդրոյն համար առ վեց տէրութիւնս տուած պատասխանը իրենց ծանուցագրի Գ. կէտի մասին: Անցեալ նամակս հաղորդեցինք թէ ինչ հիման վրայ գրուած է այդ պատասխանը, նոյնը հրատարակեցին այս տեղի բոլոր թերթերը, բայց չենք գիտեր ինչ պատճառաւ վերջի վարկեանին փոխեր են. նոյն պատասխանը թիւրք թերթերն հրատարակեցին և Stamboul այսօր կը թարգմանէ և զոր կը խրկենք ձեզ.

Ցանուցագրի այդ պատասխանը նշանաւոր է. նախ Հայաստան և հայաբնակ գաւառ բառերը գործածելէ կը զգուշանան, իսկ Քիւրդիստան անունը կը կրկնեն ու կը կրկնեն. Կառավարութիւնը կը յայտարարէ թէ մասնաւոր պաշտօնեայներ խրկած է ի Քիւրդիստան և ուրիշ գաւառներ, որպէս զի ի մօտոյ տեղականն թէ սուլթանին հաւատարիմ հպատակաց վիճակը բարւոքելու համար ինչ միջոցներ ձեռք առնելու են.—Անոնք գիտեն թէ այդ յանձնաժողովներն ինչ արդիւնք ունեցան, և այժմ նոքա ըսել թէ բարեկարգութեանց համար կարեոր միջոցներ են.

Կառավարութիւնը կըսէ թէ գաւառն բարեկարգութիւններ ըրած է, հարկերու հաւաքման գրութիւնը կատարելագործած է, ոստիկանութիւն հաստատած է. գնացող ցոյց կուտայ թէ ինչեր պիտի ընեն տպագրելն համար, վերջապէս խելք պիտի ընեն ենթադներ, որոց մէջ լաւ տեղ մը կը բռնէ tribunaux ambulants ները, որ բաւական ծիծաղ կը շարժէ.

Իսկ վերջաբանը տաճկած վիճակագրական հանձարոյն ապացոյց է. հայերը, կը յաւելցնէ պատասխանը, վանայ, Տիգրանակերտի, Բաղէշի, Խարբերդի և Սիվասի մէջ % 17-են և ուրիշ ոչ-մուսիւմաններն % 4-են, այնպէս որ մուսիւմաններն % 79-են.

Կարծենք այսպիսի չափազանցութիւն ունեցող սուտերն իրենց նշանակութիւնը ինքնին կը կորսնցնեն. Կերևայ թէ եւրոպական տէրութիւնք այս պատասխանէն չատ գոհ չը պիտի մնան, և Պ ա ռ ա մ պ ո ւ լ ալ սոյն կարծիքը կը յայտնէ այս ծրագրի վրայ. կարծենք բաւական դիտողութիւններ, քննադատութիւններ տեղի պիտի ունենան մամլոյ մէջ.

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Թիւրքաց մինիսթրութիւնը, ինչպէս հաղորդում է «Temps» լրագիրը, Նորերումս հրաման է հրատարակել, որով արգելում է Կ. Պոլսի մէջ հրատարակուող բոլոր լրագիրներին արտատպել օտար լրագիրներից որ և է տեղեկութիւններ Թիւրքիայի վերաբերութեամբ.

—Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին յուլիսի 9-ից գրում են, որ Բ. Դուռը Արեղդին-փաշայի նախագահութեամբ մի մասնաժողով է հիմնել այն վերանորոգութիւնները քննելու համար, որոնց մտադրութիւն կայ մտցնել Ասիական Թիւրքիայի մէջ.

—Լոնդոնից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ անգլիական կառավարութիւնը այժմ քննում է այն միջոցները, որոնցով աւելի հեշտ կը լինի իրագործել կոնֆերենցիայի վճիռները: Առաջ կարծում էին, որ Բ. Դուռը զիջումն կանի եւրոպական պետութիւնների ընդհանուր ճնշմանը, բայց պ. Գլոյնի վերջին ծանուցումներից երևում է, որ այդ մասին յոյս չէ կարելի ունենալ. Լորդ Գրենվիլ պետութիւնների հետ բանակցութիւններ է սկսել այն միջոցների մասին, որոնցով հեշտութեամբ կարելի լինի իրագործել Բերլինի կոնֆերենցիայի վճիռները. Ամենքը կարծում են, որ եւրոպական նաւերի ուղարկելը Միրդաց ջրերը Բ. Դրան վրա ոչինչ ազդեցութիւն չի գործի.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 Յուլիսի: «Прав. Вѣстн. Հաղորդում է որ կոմս Իգնատիեվ նշանակված է Նիժնի-Նովգորոդի գենեռալ-նահանգապետ, ոստիկանաց Ժամանակ: «Новое Время» լրագիրը ստացել է Բիրիւկ-դիբէից հետևեալ լուրը: Սկօբելեվի մոր սպանողը, պօրուչիկ Ուգատիս է և նրա ընկերները չորս մանկտացիներն են: Մահվան հարուածը տվին Սկօբելեվային հայցից ինքն Ուգատիս, իսկ նրա ընկերները ուրիշներին էին հարուածում: Սկօբելեվայի հետևեցած ուսնէբ-օֆիցիր Իվանով ստացաւ երկու վերք ուսի մէջ, բայց կարողացաւ չարագործներից պատպել և բերեց այդ լուրը Ֆիլիպաւլ: Անմիջապէս մի քանի օֆիցիրներ և 30 ձիաւորներ ձանապարհ ընկան մարդասպաններին գտնելու համար և գտան նրանց Դարմենդի մօտ: Ուգատիս տեսնելով որ փրկութիւն չը կայ, անձնասպանութիւն գործեց: Ձերնօգորդիները կրանաւորներին Ուգատիսի մի քանի բարեկամներին և նրա եղբորը, որ Սկօբելեվի մոտ ծառայում, օֆիցիրի սասիձանը ստացած չէր, որովհետև խառն էր մի կեղտոտ գործի մէջ: Կոլանաւորվածներին յանձնեցին արդարադատութեանը: Տիկին Սկօբելեվայի մարմինը գտնված է և ուղարկվում է Ս Պետերբուրգ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 Յուլիսի: Ուգատիս նախկին օֆիցիր էր, Լանդբերգի դասընկեր էր որ անցեալ տարի յայտնի սպանութիւն է գործել Կովնէնան փողոցում: Ուգատիս 28 տարեկան է, նա չէրնօգորեան գօրքի մէջ կամաւոր էր, ինչպէս Ֆիլիպայի մոտ, Սկօբելեվի աւանդութիւնամբ մեծ քաջութիւններ է արել և նրան շնորհված ոսկեայ սուր «քաջութեան համար» արձանագրեամբ և նոյնպէս 4-որդ աստիճանի Ս. Գէորգի պատուանշանը: Նա Սկօբելեվի սիրելին էր և ուսուցաց գօրքի Հայրենիք վերադառնալուց յետոյ մնաց բուսիլեանի միլիցիայի մէջ ծառայելու:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ